

10	Արոխազ Անսարիի վերաբերյալ 01.12.2022թ. գրության հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	1.5	2300		3450
11	Թիվ 83158022 վարույթի նյութերով հայերեն- պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	9	2300		20700
12	Արոխազ Անսարիի վերաբերյալ թիվ ԵՂ/1428/06/22 վարույթի նյութերով հայերեն- պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	4.5	2300		10350
13	Թիվ 58239522 քրեական գործով հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	1	2300		2300
Ընդամենը						184350

Ծառայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

KHACHATRYAN TIGRAN
3814880340

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

19/12/2022 17:58:20

Ծառայություն
(աշխատանք)
ստացող՝

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

21/12/2022 17:45:56

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

30.09.2022թ.

բ. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (Վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №31161719 քրեական գործով հետախուզվող Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի վերաբերյալ Վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐՁԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 25.08.2022թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №31161719 քրեական գործով հետախուզվող Մարտին Ֆիրդուսի Մարգարյանին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

30.09.2022թ. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված գրության համաձայն՝ ուղարկվում է ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության միջոցով ԳԴՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված հայտագրի պատճենը՝ Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման գործընթացի վերաբերյալ: Գրությանը կից տրամադրվել է 3 էջից բաղկացած փաստաթղթեր՝ գերմաներեն լեզվով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դարասիսագ



Ա. Խաչատրյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասիսանսարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



«30».....09 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

18.10.2022թ.

Ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №31161719 քրեական գործով հետախուզվող Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 25.08.2022թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №31161719 քրեական գործով հետախուզվող Մարտին Ֆիրդուսի Մարգարյանին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

Հետագայում ԳԴՀ իրավասու մարմինները՝ Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը քննարկելու նպատակով սահմանված կարգով պահանջել են լրացուցիչ տեղեկություններ (երաշխիքներ):

18.10.2022թ. ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել են ՀՀ արդարադատության նախարարի կողմից տրված երաշխիքները: Երաշխիքների մնացած մասը տրամադրվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գրությամբ: Սույն երաշխիքներն անհրաժեշտ է ուղարկել ԳԴՀ իրավասու մարմիններին՝ Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման մասին միջնորդության հետագա ընթացքը ապահովելու նպատակով:

«Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ «Փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայցող կամ հայցվող կողմի լեզվով: Հայցվող կողմն իր ընտրությամբ կարող է թարգմանություն պահանջել Եվրոպայի Խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով»:

Սույն հոդվածի կապակցությամբ ԳԴՀ կողմից 01.01.1977թ. արված վերապահման համաձայն՝ հանձնման մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնման մասին միջնորդությունը լրացնող տեղեկությունները (տվյալ դեպքում լրացուցիչ երաշխիքները) համարվում են միջնորդությանը կից փաստաթղթեր և այն, որ այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն գերմաներեն կամ ԵՄ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, անհրաժեշտություն է առաջացել թարգմանել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հիշյալ գրությունը՝ ԳԴՀ իրավասու մարմիններին ուղարկելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման մասին միջնորդությունը լրացնող ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված երաշխիքների գերմաներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

*Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դատախազ*



Ա. Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



«18»..... 2022թ.

Որոշում
Թարգմանիչ հրավիրելու մասին

24 հոկտեմբերի, 2022 թ.

Զ. Գյումրի

Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդաստիճանի խորհրդական՝ Ա.Տ.Մուռնյան, ուսումնասիրելով թիվ 68116622 քրեական վարույթը:

ՊԱՐԶԵՑԻ՝

Քրեական վարույթով մեղադրյալներ Արուֆազ Հոսեյն Քուզեյարը, Սաջադ Ղուրխան Մուղատամ Հասանը և Արուֆազ Սահիդի Մոհամմադի Լույեն չեն տիրապետում դատավարության լեզվին, տիրապետում են գրավոր և բանավոր պարսկերեն լեզվին:


Նկատի ունենալով, որ մեղադրյալներ Արուֆազ Հոսեյն Քուզեյարին, Սաջադ Ղուրխանի Մուղատամ Հասանին և Արուֆազ Սահիդի Մոհամմադի Լույեին հանձնման ենթակա փաստաթղթերը պետք է թարգմանվեն հայերեն լեզվից պարսկերեն լեզվով ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 38-րդ և 61-հոդվածներով:

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 68116622 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (ծնված՝ 15.01.1991 թվականին, ունի «Արևելյան լեզուներ և գրականություն» (պարսկերեն մասնագիտությունը):
2. Հ.Թախմասյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-հոդվածով նախատեսված իր քրեադատավարական իրավունքները պարտականությունները:
3. Հ.Թախմասյանին պարզաբանել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսում քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելու համար, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը:

Ավագ դատախազ՝

Ա.Տ.ՄՆՈՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

26 հոկտեմբերի, 2022թ.

ք. Երևան

«Վազգային ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Վ.Նազարյանս, ուսումնասիրելով թիվ 58232222 քրեական վարույթի նյութերն ըստ մեղադրանքի Մուհամադ Ազիմինի և Բեհրուզ Ռահմաթիի «Քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով /2 դրվագ/, 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

«Վազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննված թիվ 58232222 քրեական գործն ըստ մեղադրանքի Մուհամադ Ազիմինի և Բեհրուզ Ռահմաթիի «Քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով /2 դրվագ/, 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 2022 թվականի հոկտեմբերի 21-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

«Քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալներ Մուհամադ Ազիմինը և Բեհրուզ Ռահմաթին չեն տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում են պարսկերեն լեզվին և իրենց հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չեն հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը մեղադրյալներին հասկանալի լեզվով

նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից *պարսիցի* թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին: Հրանուշ Թախմասյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 61-րդ հոդվածով,


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Մուհամադ Ազիմինի և Բեիրուզ Ռահմաթիի վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական ղեկարտամենտում քննված թիվ 58232222 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին /ID 000407163 /:

Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններին և իրավունքներին:

Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանիչ կողմից սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ



Վ. Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Հրանուշ Թախմասյան

«26» 10 2022 թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

01.11.2022թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Ժորա Ավետիսյանի հանձնումը մերժելու մասին ՀՀ գլխավոր դատախազի որոշումը և 31.10.2022թ. №21/32-424-20 կարգադրությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

31.10.2022թ. որոշում է կայացվել Ժորա Ավետիսյանի հանձնումը Ուկրաինայի իրավասու մարմիններին մերժելու մասին: ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել Ժ.Ավետիսյանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել (...) վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:


Նկատի ունենալով, որ Ժորա Ավետիսյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ Լուսինե Մարգարյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 61-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ժորա Ավետիսյանի հանձնումը մերժելու մասին որոշման հայերենից ուկրաիներեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Լուսինե Մարգարյանին (ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ 001805944, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 06.10.2010թ.) և նրան պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:


2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական
համագործակցության վարչության պետի տեղակալ  Ա. Հովհաննիսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝


L. Մարգարյան

«...01...».....17..... 2022թ.

07.10.2022թ.

ք. Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության գատախազ Ա.Միքայելյան, ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) իրավաբան մարմինների կողմից հետախուզվող ՅՈՒՍԵՖ ՍՈԼԵՄԱՆԻ ՉԵՀՐԵԴԿԻ (CHEHREGHANY YOUSEF, SOLEIMAN) վերաբերյալ փաստաթղթերը.

ՊԱՐԳՄԱՆԻՉ


2022 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից հայտնաբերվել և ձեռքբերվել է ԻԻՀ իրավաբան մարմինների կողմից միջազգային մակարդակով հետախուզման մեջ գտնվող ԻԻՀ քաղաքացի ՅՈՒՍԵՖ ՍՈԼԵՄԱՆԻ ՉԵՀՐԵԴԿԻ (CHEHREGHANY YOUSEF, SOLEIMAN):

ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների գատախազության 13.09.2022թ. գրությունը և կից նյութերը, որին կցված է նաև օտարալեզու փաստաթուղթ:

Ակտի ունենալով, որ վերոնշյալ օտարալեզու փաստաթուղթը անհրաժեշտ է թարգմանել պարսկերենից հայերեն, իսկ ՀՀ ԱՆՈՒՇ ԹԱՄԱՍՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 61-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Յու Ա. ՉԵՀՐԵԴԿԻ վերաբերյալ փաստաթուղթը պարսկերենից գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (ID 000407163, դիպլոմ թիվ 013781) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ հոդվածով, 504-րդ հոդվածով առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու, սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության գատախազ  Ա.Միքայելյան

Իմ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իմ իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ նախազգուշացվել եմ առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու, սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ հոդվածով, 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ  Հ. Թախմասյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

2022թ. նոյեմբերի 15

ք.Երևան

Ես՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Ն.Թովուզյանս, ուսումնասիրելով թիվ 17115621 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները, ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով, համատեղ ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողների հետ, 2020 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը 15:30-ին, Երևան քաղաքի Մոլդովական փողոցի 36 հասցեի մոտից, ապօրինի թմրամիջոց պահելու և օգտագործելու կասկածանքով, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին են բերման ենթարկել Արթուր Հենրիկի Դարիկյանին, ում մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է պոլիէթիլյան տոպրակի մեջ փաթեթավորված 0,46 գրամ քաշով «METH» գրառմամբ դեղահաբի կտոր և թվով 30 հատ կանեփի բույսի սերմեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Ա.Դարիկյանը բացատրությամբ հայտնել է, որ նշված հաբը գնել է 14.02.2020թ.-ին՝ Երևան քաղաքի Բագրևանդ փողոցի սկզբնամասում՝ 2700 ՀՀ դրամ գումարով՝ ոմն Վահրամից, իսկ կանեփի նմանվող սերմերը քաղել է 2019 թվականի նոյեմբեր ամսին՝ Նոր Նորքի վարչական տարածքից Նորք Մարաշ գնացող ճանապարհից՝ հետագայում աճեցնելու նպատակով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Վահրամը հանդիսանում է՝ Վահրամ Դերենիկի Վարդանյանը:

2020թ. փետրվարի 14-ին դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17167220 քրեական գործը, որը նույն օրը ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին և ընդունվել է վարույթ:

2021թ. փետրվարի 17-ին թմրամիջոց ապօրինի պահելու, օգտագործելու և իրացնելու կասկածանքով Վահրամ Վարդանյանը բերման է ենթարկվել ոստիկանության Նոր Նորքի բաժին, որտեղ վերջինիս անձնական խուզարկությամբ հագին եղած ձախ կոշիկի միջից հայտնաբերվել է թվով 9 փաթեթ՝ ընդհանուր մոտ 2.56 գրամ քաշով շագանակագույն զանգվածներով:

2021թ. դեկտեմբերի 31-ին որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին և Վահրամ Դերենիկի Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

Մեղադրյալի դատավարական կարգավիճակում Վահրամ Դերենիկի Վարդանյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ իր անձնական խուզարկությամբ հայտնաբերված և վերցված զանգվածը հանդիսանում է «Հերոին» տեսակի թմրամիջոց, որը ձեռք է բերել Օմիդ

Սոփիանիից, ինչի հաշվառմամբ 2021թ. դեկտեմբերի 15-ին թիվ 17167220 քրեական գործի նյութերով հարուցվել է թիվ 17115621 քրեական գործը:

2021թ. դեկտեմբերի 29-ին որոշում է կայացվել Օմիդ Սոփիանիին մեղադրանք առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարելու համար: Նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը չհեռանալու մասին:

2021թ. դեկտեմբերի 29-ին որոշում է կայացվել թիվ 17115620 քրեական գործով վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կասեցնելու մասին:

2022թ. փետրվարի 07-ին թիվ 17115621 քրեական գործը ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունից դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի ցուցումը և քրեական գործը՝ կասեցման օրինականությունը չստուգված վիճակում, ինչի կապակցությամբ նույն օրը որոշում է կայացվել թիվ 17115621 քրեական գործով վարույթը վերսկսելու մասին:

2022թ. փետրվարի 9-ին որոշում է կայացվել մեղադրյալ Օմիդ Սոփիանիի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոփոխելու և կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն հարուցելու մասին, որը դատարանի կողմից բավարարվել է և Օմիդ Սոփիանիի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել երկամսյա ժամկետով կալանավորումը:

2022թ. հունիսի 24-ին ժամը 02:30-ին Օմիդ Սոփիանին Հայաստանի Հանրապետության Մեղրիի սահմանային անցակետից ՀՀ պետական սահմանը հատելիս քերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Մեղրիի բաժին, որտեղից էլ հանձնվել է վարույթն իրականացնող մարմնին,

2022թ. նոյեմբերի 4-ին, կատարված նախաքննությունից հետո որոշում է կայացվել հասուտուղի թիվ 17115621 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը և քրեական վարույթն ուղարկել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ դատաքննության: Կատարված նախաքննության արդյունքում պարզվել է, որ Օմիդ Սոփիանին չի տիրապետում վարույթի լեզվին, այլ տիրապետում է պարսկերենին, ինչը նշանակում է, որ մեղադրական եզրակացությունն անհրաժեշտ է թարգմանել հայերենից պարսկերեն և այն հանձնել նրան իրեն հասկանալի լեզվով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն թարգմանիչը վարույթի առարկայով չչահագրգռված այն անձն է, որին վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն կատարելու համար: Թարգմանիչ է նաև համրի նշանները հասկացող և խուլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն թարգմանիչը պետք է պատշաճ տիրապետի վարույթի լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարույթի լեզուն գրական հայերենն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով

նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին հսկող դատախազն անմիջապես գրավոր տեղեկացնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց պատշաճ ձևով ուղարկելով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները:

Այսպիսով, նկատի ունենալով, որ անհրաժեշտ է ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործառնություն իրականացում, իսկ Հրանուշ Մկրտչի Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, ով իր մասնագիտական գործունեության ընթացքում իրականացնում է թարգմանչական գործառնություն, նրա ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ուստի դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 206-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 17115621 քրեական գործով մեղադրյալ Օմիդ Նասիմի Սոքիանիի վերաբերյալ մեղադրական եզրակացության հայերենից պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (ՀՀ քաղաքացու անհատականացման քարտ՝ 000407163, տրված՝ 029-ի կողմից 27.12.2013թ., որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ Երևանի պետական համալսարանի դիպլոմ՝ PB 013781 տրված՝ 05.07.1990թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-5-րդ մասերով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները, ըստ որի

Թարգմանիչն իրավունք ունի՝

- 1) թարգմանությունը ճշգրտելու համար վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ հարցեր տալու թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց.
- 2) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված կատարել դիտողություններ.
- 3) յուրաքանչյուր անգամ ստանալու ապացուցողական կամ վարութային այլ գործողությանը մասնակցելու համար կատարած ծախսերի հատուցում.
- 4) իրականացնելու սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

5. Թարգմանիչը պարտավոր է՝

- 1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.
- 2) վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իր որակավորումը հաստատող փաստաթղթերը.
- 3) դատարանի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և վարույթին ներգրավված անձանց հետ հարաբերությունների մասին.
- 4) թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարման վայրում, դատական նիստի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

5) թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին.

6) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը.

7) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին, եթե դրանք չեն վերաբերում թարգմանության բովանդակությանը, ինչպես նաև առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարույթային այլ գործողության, ինչպես նաև դոկիակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

8) ենթարկվել դատական նիստի կարգին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթով թարգմանչի կողմից սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսաննապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) շահադիտական դրդումներով կամ

2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դոկիակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ՝

Ն.Թուփուզյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պարտասխանաբարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

«15».....11..... 2022թ.

Հրանուշ Թախմասյան

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

22.11.2022թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (Վարչություն) դատախազ Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով №31161719 քրեական գործով հետախուզվող Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի վերաբերյալ Վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 25.08.2022թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №31161719 քրեական գործով հետախուզվող Մարտին Ֆիրդուսի Մարգարյանին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

22.11.2022թ. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված գրության համաձայն՝ ուղարկվում է ԳԴՀ-ում ՀՀ դեսպանության միջոցով ԳԴՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված հայտագրի պատճենը՝ Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման գործընթացի վերաբերյալ: Գրությանը կից տրամադրվել է 2 էջից բաղկացած փաստաթղթեր՝ գերմաներեն լեզվով:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացված Մարտին Ֆիրդուսի Մարգարյանի հանձնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍԱԹԵՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱԹՅԱՆԻՆ (անձնագիր BA սերիայի №0387407, ԵՊՀ դիպլոմ Ա № 003927) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դարասիւղ



Ա. Խաչատրյան

Սրանցա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարչության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասիանսարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
ՍԱԹԵՆԻԿ ՀԱԹՅԱՆ



«22».....11..... 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

30-ը նոյեմբերի 2022թ.

ք. Երևան

«Վախճանի» գրականության և հասարակական գիտությունների թանգրանտի հիմնադրամի կողմից հանրագրությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարագրության առաջին դասի խորհրդական Մ. Հակոբյանս, ուսումնասիրելով Մոխսեն Մոհամմադի Յասեփյանի վերաբերյալ «Վախճանի» Երևանի քաղաքային վարչության 3-րդ բաժնից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84110422 քրեական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2022 թվականի նոյեմբերի 30-ին «Վախճանի» գրականության և հասարակական գիտությունների թանգրանտի հիմնադրամի կողմից հանրագրությունների գործերով վարչության ավագ դատախազ է «Վախճանի» Երևանի քաղաքային վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84110422 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Մոխսեն Մոհամմադի Յասեփյանի» «Վախճանի» 399-րդ հոդվածի 1-ին մասով:

Սույն օրը որոշում է կայացվել թիվ 84110422 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Վախճանի» գրականության և հասարակական գիտությունների թանգրանտի հիմնադրամի կողմից հանրագրությունների գործերով վարչության ավագ դատախազ է

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատուց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր րոլը իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

Նկատի ունենալով, որ սույն քրեական վարույթով մեղադրյալ Մոխսեն Մոհամմադի Յասեփյանին հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է պարսկերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, և այն հաստատելու մասին հսկող դատախազի որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ՝ ՔՊ ՊՆ ՈՒՍՏՆ 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

Հրանուշ Թախմասյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, այն է՝ արևելյան լեզուներ և գրականություն (պարսկերեն), ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 61-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Մոհսեն Մոհամմադի Յասեյանիի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84110422 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB No 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

2. Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներին և պարտականություններին:

3. Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական վարույթով առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու և սխալ թարգմանություն կատարելու համար համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության քնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝



Մ. Հակոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հրանուշ Թախմասյան

« 30 » 11 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

02.12.2022թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Աբուլֆազլ Անսարիի վերաբերյալ լրացուցիչ երաշխիքներ հայցելու մասին գրությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է Աբուլֆազլ Անսարիին (ABOLFAZL ANSARI) հանձնելու մասին միջևորդությունը:

01.12.2022թ. գրությամբ նշված միջևորդությունը քննարկելու նպատակով հայցվել են լրացուցիչ տեղեկություններ:

ՀՀ և ԻԻՀ միջև գործող «Հանձնման համաձայնագրի» 5-րդ հոդվածի համաձայն՝ ... փաստաթղթերը պետք է կազմվեն հայցող Պայմանավորվող կողմի օրենքների համապատասխան՝ ուղեկցված հայցվող Պայմանավորվող կողմի լեզվով համապատասխան թարգմանությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին, իր ստորագրությամբ հաստատել ապացուցողական կամ վարության այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը և այն հանգամանքը, որ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 61-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. ԻԻՀ իրավասու մարմնից Աբուլֆազլ Անսարիի վերաբերյալ հայցվող լրացուցիչ երաշխիքների կապակցությամբ գրության հայերենից պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ 000407163, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ դիպլոմ PB № 013781՝ տրված 05.07.1990թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային

աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարգաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական
համագործակցության վարչության պետի տեղակալ



Ա. Հովհաննիսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Բմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հ. Թախմասյան

«02».....12..... 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

1-ը դեկտեմբերի 2022թ.

ք.Երևան

«Վ» գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ռ.Գևորգյանս, ուսումնասիրելով Խոսրո Նասրոլլահի Սիամիգորջիի «Վ» վերաբերյալ «Վ» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 83158022 քրեական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2022 թվականի նոյեմբերի 25-ին «Վ» գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է «Վ» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության թիվ 3 բաժնում քննված թիվ 83158022 քրեական վարույթն՝ ըստ մեղադրանքի Խոսրո Նասրոլլահի Սիամիգորջիի՝ «Վ» քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով և «Վ» քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի 1-ին մասով:

2022 թվականի դեկտեմբերի 1-ին որոշում է կայացվել թիվ 83158022 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Վ» քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

Նկատի ունենալով, որ սույն քրեական վարույթով մեղադրյալ Խոսրո Նասրոլլահի Սիամիգորջիի գրական հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է պարսկերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, այն հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու և իր բոլոր իրավունքներն իրականացնելու հնարավորություն տալու նպատակով

անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» թարգմանչական գրասենյակի թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB № 013781՝ տրված Երևանի պետական համալսարանի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

Հրանուշ Թախմասյանն ունի պարսկերեն լեզվի թարգմանչի որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 61-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Խոսքո Նասրոլլահի Սիամիգորջիի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության թիվ 3 բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 83158022 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «ՎԻ ԳՐՈՒՊ» թարգմանչական գրասենյակի թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB № 013781՝ տրված Երևանի պետական համալսարանի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

2. Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներին և պարտականություններին:

3. Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական վարույթով առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելու և սխալ թարգմանություն կատարելու համար համապատասխանաբար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության
առողջության դեմ ուղղված հանցագործությունների
գործերով վարչության դատախազ՝

Ռ. Գևորգյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Հրանուշ Թախմասյան

« 01 » 12 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

07 դեկտեմբերի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության քրեական օրենսգրքի 656-րդ հոդվածի (գողություն) մեղադրանքով հետախուզվող **ԱԲՈԼՖԱԶԼ ՄՈՀՍԵՆԻ ԱՆՍԱՐԻ** (**ABOLFAZL MOHSEN ANSARI**) նկատմամբ հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ԵԴ/1428/06/22 որոշումը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Ձվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցները, Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի կողմից, այդ երկրի քրեական օրենսգրքի 656-րդ հոդվածի (գողություն) մեղադրանքով, 2020 թվականի փետրվարի 6-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, «Ձվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահում, 2022 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 07³⁰-ին, ձերբակալել և բաժին են տեղափոխել Ստամբուլ-Երևան թիվ 550 չվերթի ուղևոր, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի **ԱԲՈԼՖԱԶԼ ՄՈՀՍԵՆԻ ԱՆՍԱՐԻ** (**ABOLFAZL MOHSEN ANSARI**), ում նույն օրը՝ ժամը 10⁰⁰-ին, ձերբակալել և տեղափոխել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալվածների պահման վայր:

ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (**ABOLFAZL ANSARI**) ձերբակալման վերաբերյալ փաստաթղթերը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն է ստացվել 2022 թվականի նոյեմբերի 14-ին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Տաթևիկ Մուրադյան) 2022 թվականի նոյեմբերի 15-ի № ԵԴ/1371/06/22 որոշմամբ **ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ** (**ABOLFAZL ANSARI**) նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով (լրանում է 2022 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 07³⁰-ին, որոշման պատճենը կցվում է):

ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ստացվել է **ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ** (**ABOLFAZL ANSARI**) - հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է ժամանակ, **ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ** (**ABOLFAZL ANSARI**) հանձնման մասին միջնորդությունը քննարկելու, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ հարցումներ կատարելու, ստացված

պատասխանների հիման վրա համապատասխան որոշում կայացնելու համար, 2022 թվականի դեկտեմբերի 5-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI) հանձնման նպատակով կալանավորելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ԵԴ/1428/06/22 որոշմամբ բավարարվել է միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻՆ (ABOLFAZL ANSARI) չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ԱԲՈԼՖԱԶԼ ՄՈՀՍԵՆԻ ԱՆՍԱՐԻՆ (ABOLFAZL MOHSEN ANSARI) հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ԵԴ/1428/06/22 որոշման պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից, նույնականացման քարտ՝ № 000407163, տրված 27.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ՝ PB սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,


2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ հրավումներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



«07» 12 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

16 դեկտեմբերի 2022թ.

ք. Երևան

«Վյապարհ դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Լիաննա Հակոբյանս, ուսումնասիրելով թիվ 58239522 քրեական վարույթի նյութերն ըստ մեղադրանքի ըստ մեղադրանքի՝ Մոջթաբա Ահմադի Նիք Մեիրի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով /2 դրվագ/ 469-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

«ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննված թիվ 58239522 քրեական գործն ըստ մեղադրանքի Մոջթաբա Ահմադի Նիք Մեիրի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով /2 դրվագ/ 469-րդ հոդվածի 1-ին մասով և 44-469-րդ հոդվածի 1-ին մասով 2022 թվականի դեկտեմբերի 14-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Մոջթաբա Ահմադի Նիք Մեիրը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին, ուստի մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը մեղադրյալին

հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին:

Հրանուշ Մկրտիչի Թախմասյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է համապատասխան լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 61-րդ հոդվածով,


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Մոջթաբա Ահմադի Նիք Մեհրի վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչական ղեկարտամենտում քննված թիվ 58239522 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին /անձնագիր AN 0780981, տրված՝ 22.12.2013թ.:

Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններին և իրավունքներին:

Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանիչ կողմից սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում
մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ
հսկողության վարչության դատախազ




L. Հակոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Հրանուշ Թախմասյան
« 16 » 12 2013թ.